



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ԴՐԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

«29 «07 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000055

Ձեռնարկողը՝

«ԷՆ ԷՅ ՈՒՂԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ» ՓԲԸ

**Գործունեությունը՝ Ապարան համայնքի վարչական տարածքում՝ Քուչակ
բնակավայրի մոդակայքում շշալցման գործարանի կառուցման
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՈՒԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԵՐԻԹՅԱՆ

թիվ ԲՓ 000055

<<29>> 07 2020թ.

Ապարան համայնքի վարչական տարածքում՝ Քուչակ բնակավայրի մոտակայքում շշալցման գործարանի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայդ

Ներածական մաս

ԶԵՐՆԱՐԿՈՒ

«ԷՆ ԷՅ ՈՒԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ

Գ Կատեգորիա

ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱԼՐԾ՝

Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ

բնակավայր

Նախատեսվող գործունեության՝ շշալցման գործարանի կառուցումը նախատեսվում է իրականացնել. Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարչական տարածքում՝ Քուչակ ընակավայրից 1-1.5կմ հեռավորության վրա:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կազմակերպության սեփական՝ 0.2321 հա և 2.4367հա տարածքներում: Համաձայն հայտի՝ նախատեսվող գործունեության տարածքները եղել են գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողահանդակներ՝ խոտհարքեր: Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի կողմից 2019թ. մարտի 25-ի N 122-Ա և N 123-Ա որոշումներով՝ 0.2321 հա գյուղատնտեսական նշանակության արտավայրերի և 2.4367հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերի նպատակային նշանակությունները փոխվել են, որպես Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների և արդյունաբերության, ընդերթօգտագործման և այլ արտադրական նպատակային և գործառնական նշանակության հողերի:

Գործունեության նպատակն է կառուցել քաղցրահամ ջրի շշալցման գործարան: Շշալցման համար օգտագործվելու է խորքային արտեզյան ջուր: Արտեզյան ջրի հորատանցքի կոորդինատներն են՝ $X=40^{\circ} 31'00,3''$, $Y=44^{\circ} 22'32,35''$, $H=1882\text{մ}$: Ջրօգտագործման թույլտվությունը ձեռնարկությունը ստացել է 2018թ. նոյեմբերի 9-ին (N000178):

Նկարագրական մաս.

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շշալցման գործարանի նստական տարածքը գտնվում է Արագած լեռնազանգվածի արևելյան մոտութերքուն, Թուչակի



դաշտավայրում՝ ծովի մակարդակից 1895-1905մ բարձրությունների վրա: Քոչակ բնակավայրը գտնվում է Ապարան քաղաքից 8կմ հեռավորության վրա: Կիման բարեխառն է, տևական ցուրտ ձմեռով և տաք, խոնավ ամառով: Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 600-700մ: Քոչակ գյուղի տարածքում մթնոլորտային օդն աղտոտված չէ: Տեղանքի ոելիեֆը աստիճանակերպ, չափավոր մասնատված լեռնային հարթություն է: Հանդշաֆտը սևահողային տափաստան է, նախկինում օգտագործվել է որպես ցորենի, գարու և առվույտի մշակադաշտեր՝ ներկայումս չի մշակվում: Երկրաբանական կառուցվածքին բնորոշ են անդեգիտները և անդեգիտաբազալտները, իսկ Քոչակի հարթավայրում տարածված են նախալեռնային տիպի լճասացադաշտային նստվածքները: Նախագծվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում: Քոչակ գյուղից՝ 3 կմ, իսկ գործունեության ենթակա տարածքից՝ 1.1կմ հեռավորության վրա հոսում է 89կմ երկարություն և 1480կմ² ջրհավաք մակերես ունեցող քասախ գետը: Նախատեսվող տարածքի երկայնքով անցնում է Քասախ գետի անանուն փոքր վտակը: Ստորգետնյա ջրերի սնման հիմնական աղբյուր են հանդիսանում մթնոլորտային տեղումները: Քոչակ-Ապարան տեղամասերում գրանցված են 85 աղբյուրներ՝ 1000լ/վրկ գումարային դեբիտով, Քոչակ գյուղի մոտ՝ 200լ/վրկ դեբիտով: Այս աղբյուրների ջրերն ունեն խմելու ջրի բարձր որակ, լավ ֆիզիկական հատկություններ՝ ցածր ջերմաստիճան և ցածր հանքայնացում:

Համաձայն նախնական հայտի՝ կատարվել են գործունեության ենթակա տարածքի հողերի, կենսաբազմազանության ուսումնասիրություն՝ դաշտային և լաբորատոր պայմաններում: Կատարվել է հողերի նմուշառում՝ հողերի տիպը, կառուցվածքը, մեխանիկական կազմը, քարքարոտությունը, էրոզիայի աստիճանը որոշելու նպատակով: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ գործարանի տարածքի հողերը քիչ քարքարոտ են, հիմնականում ունեն օպտիմալ քH, բավարար հումուսացված են՝ վերին հորիզոնի հողաշերտի 35-50սմ հզորությամբ:

Ուսումնասիրության արդյունքներով հետազոտվող տարածքում << Կարմիր գրքում գրանցված անհետացող, հազվագյուտ, վտանգված կամ էնեմիկ բուսատեսակները և կենդանատսակները բացակայում են: Ըստ ուսումնասիրության՝ գործունեության տարածքում հիմնական բուսականությունը բազմամյա խոտաբույսեր են: Տարածքում հանդիպում են ծառաթփային, թփուտային և ժայռային բուսականություն, բազմամյա խոտաբույսերից՝ դեղատու, սննդային, մոլախտային և այլն: Բազմամյա խոտաբույսերից գեղազարդային արժեք ունի Հիրիկ թզուկայինը: Համաձայն հաշվետվության՝ վերջինս և այլ սոխուկավոր տեսակները, տեղափոխվելու են մերձակա համապատասխան վայրեր՝ բնության մեջ պահպանելու նպատակով: Իսկ ծառաթփային բուսականության մի շարք տեսակներ՝ սպիտակ կեղծ, տարատերև տեսակի, մասրենի, արռուենի և այլ, նախատեսվում է օգտագործել գործարանի տարածքը կանաչապատելու համար:

Երթուղային եղանակով(գիտարշավ) իրականացվել են նաև գործունեության և հարակից տարածքների կենդանական աշխարհի ուսումնասիրություն: Տարածքում առկա են փափկամարմիններ, դաշտամուկ, ողնաշարավորներից՝ կանաչ դոդոշ, թռչուններից՝ դաշտային առտույտ, ծիծեռնակ, կաչաղակ, մեծ ճուռակ, բազե և այլն:

Քոչակ գյուղում և շրջակայքում առկա են 27 հնագիտական հուշարձաններ, որոնք գործունեության տարածքից գտնվում բավական մեծ հեռավորության վրա: Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում հուշարձաններ չկան: Շատ աղքատ տարածքին ամենամոտը գտնվում է Արագածի ալպյան արգելավայրը՝ 15կմ:

Նախատեսվող գործարանի մակերեսը զբաղեցնելու է 2հա: Գործարանի շինարարության ընթացքում կատարվելու են 10400տ հողային աշխատանքներ, որից 2400տ գործունենք ն:



Գրունտներից 700տ-ն օգտագործվելու է որպես հետլիքը, իսկ մնացածն օգտագործվելու է տարածքի հարթեցման և մերձատար ճանապարհների վերակառուցման համար: Հողային աշխատանքների կատարման ժամանակ առաջանալու է նաև 4հազ մ³ հողի բերրի շերտ, որը պահվելու է տարածքում, շինարարության ավարտից հետո օգտագործվելու է գործարանի շինություններից ազատ տարածքների կանաչապատման համար: Տարածքում բուսահողը պահվելու է ծածկված վիճակում՝ բրեգենտով:

Շինարարության ընթացքում առաջանալու են կենցաղային թափոններ(0.470տ/տարի) և 0.09տ եռակցման թափոն(4-րդ կարգ): Շինարարական աշխատանքների ավարտից հետո եռակցման թափոնը հանձնվելու է լիցենզավորված կազմակերպություններին:

Գործարանի կառուցման շինարարական աշխատանքները տևելու է 210 օր: Արտադրական իրապարակը ցանկապատվելու է: Օգտագործվելու են տուֆ, բետոն և այլն: Շինարարության համար նախատեսվող բետոնը բերվելու է պատրաստի վիճակում: Օգտագործվելու է շինարարական տեխնիկա՝ էքսկավատոր, բուլդոզեր, ամբարձիչ, եռակցման սարք: Շինարարության ժամանակ օհտագործվելու է մեքենայով բերվող տեխնիկական ջուր (209.7 մ³/շին ժամ): Ջրանի համար: Աշխատողների համար խմելու ջուրը(14մ³/շին ժամ) բերվելու է բալոններով: Տնտեսակենցաղային կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է կենսազուգարան:

Շինարարության փուլում առաջանալու են օդային ավագան արտանետումներ՝ 2.52տ քանակով, որոնց արտանետումների մակարդակը համաձայն հայտի՝ գտնվելու են բնակելի գոտու համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում:

Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում և շինություններից ազատ տարածքի կանաչապատում (3000մ²): Կանաչապատ տարածքի ոռոգման և ջրանման նպատակով ջուրը վերցվելու է Քոչակ գյուղի ոռոգման համակարգի՝ 1800.0մ³/տարի:

Գործարանի կառուցման արդյունքում ստեղծվելու են 40 նոր աշխատատեղ՝ 3 հերթափոխային գրաֆիկով:

Համաձայն հայտի՝ ընկերությունը շշալցման համար նախատեսում է ձեռք բերել իտալական արդիական ինովացիոն սարքավորումներ՝ SINCROBLOC 8-50-8 P=113մմ մոդելի «ծգիչ արտափշման-շշալցման-խցափակման մեքենա» ավտոմատացված ինտեգրացված բլոկը: Բացի հիմնական հոսքագծի մեքենաներից, շշալցման տեխնոլոգիական գործընթացն ապահովվելու համար տեղադրվելու են նաև մի շարք օժանդակ սարքավորումներ՝ խցափակման թասակների մատուցման, հոսքագծի ավտոմատացված համակարգեր, լվացման կայանք, պիտակների փակցման ռոտացիոն մեքենա և այլն: Շշալցման տեխնոլոգիան ներառում է՝ խորքային ջրի նախնական մաքրում, պոլիէթիլենե շշերի խցափում, խորքային ջրով պոլիէթիլենե շշերի լցոնում, լցված շշերի խցափակում, ստերիլիզացում, շշերի պիտակավորում, փաթեթավորում և մատակարարում՝ սպառողներին: Թարմ արտեզյան ջուրն օգտագործվելու է միայն շշալցման համար: Խորքային հորից հանվող շշալցող ջուրն ունի խմելու որակ, ֆիզիկական հատկությունների տեսակետից՝ թափանցիկ, անգույն, անհամ, անհոտ՝ առանց նստվածքի և իր բոլոր սանհիտարա-քիմիական ցուցանիշներով համապատասխանելու է ՍանԿեՆ 2-III-U2-1 պահանջներին: Խորքային ջրի միջին դեբիտը կազմում է 28.8մ³/ժամ՝ մշտական ռեժիմով: Արտեզյան ջուրը գործարան է մատուցվելու պոմպի օգնությամբ՝ 8լ/վրկ արտադրողականությամբ: Արտեզյան ջուրը հորատանցքից շշալցման արտադրամաս է հասցելու 200մ երկարությամբ, 80մմ տրամագծով պլաստմասե սննդային խողովակով: Արտեզյան ջրի հաշվարկային ծախսը կազմելու է 171417.6մ³, առավելագույն օրականը՝ 691.2մ³:



Համաձայն նախագծի՝ շշալցվող արտեզյան ջրի բարձր որակ ապահովելու համար նախատեսվում է տեղադրել ջրի մաքրման կայան, որը ապահովելու է ջրի մաքրումը 3 փուլերով.

-1-ին փուլ՝ նստեցման ավագանում ջրի մեխանիկական մաքրում՝ ավագահատիկներից ազատվելու համար,

-2-րդ փուլ՝ ջրի աղտահանում ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ,

- 3-րդ փուլ՝ ջրի քիմիական մաքրում մեմբրանային գտիչներով:

Գործարանի շահագործման ընթացքում կատարվելու է ջրի մշտական քիմիական և մանրէաբանական անլիիզ:

Գործարանում տեղադրվելու է մեկ հոսքագիծ՝ 18.0հազար շիշ/ժամ արտադրողականությամբ: Խորքային ջուրը լցվելու է 1.0-1.5 լիտր ծավալով պոլիէթիլենային շաքերի մեջ: Գործարանի առավելագույն արտադրողականությունն՝ ըստ 1.5 լ տարողությամբ շաքերի, կազմելու է 107.136 մ³/շիշ/տարի, իսկ ըստ լցված խորքային ջրի՝ 160.7հազար մ³/տարի:

Գործունեության իրականացման տեխնոլոգիական կարիքներից ենթելով, նախատեսվում է տեղադրել բնական գազով աշխատող, 1046կՎտ հզորությամբ կաթսա՝ գազի 234112մ³/տարի ծախսով: Գործունեության իրականացման արդյունքում լինելու են մթնոլորտային վնասակար արտանետումներ՝ 0.702տ/տարի (ածխածնի օքսիդ՝ 0.152 և ազոտի օքսիդ՝ 0.55 տ/տարի): Համաձայն հայտի՝ մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի մերժգետնյա կոնցենտրացիաները՝ արտադրական հրապարակում և բնակելի գոտում գտնվելու են թույլատրելի նորմերի սահմաններում:

Համաձայն գնահատման հայտի՝ գործարանի շահագործման փուլում օգտագործվելու է ջուր՝ աշխատողների տնտեսա-կենցաղային կարիքների և լաբորատորիայի (տարեկան 1150.0մ³), իրդեհաշիջման, տեղային շրջանառու համակարգի համար (327360մ³/տարի): Ջուրը վերցվելու է Քուչակ գյուղի ջրամատակարարման ցանցից: Բարձր ճնշման կոմպրեսորի և նոր փշված շաքերի հատակի հովացման նպատակով՝ գործարանում տեղադրվող շրջանառու համակարգը նպաստելու է ջրի ծախսի կրճատմանը:

Գործարանի շահագործումից (սարքավորումների լվացում, արտադրամասի հիդրոմաքրում, լաբորատորիա, տնտեսա-կենցաղային) առաջանալու են կեղտաջրեր, որոնք պարունակելու են կախված մասնիկներ, թԿՊ, թՔՊ, ազոտ ամոնիակային, ֆոսֆատ-իոն, նիտրատ-իոն, սուֆատ-իոն, քլորիդ-իոն, ացետատ-իոն, երկաթ, նատրիում, կալիում, կալցիում, մագնեզիում, լվացող նյութեր, ճարպեր:

Հոսքաջրերն ուղղվելու են 6մ³/օր արտադրողականությամբ (98% արդյունավետությամբ) «Յալմա» մակնիշի 30Ռ մոդելի, ինքնավար, բազմաստիճան մաքրման կառուցվածքով կենսաբանական մաքրման կայան: Հնարավոր է այն փոխարինել նոյն մաքրման աստիճան ունեցող այլ ինքնավար կենսաբանական մաքրման կայանով: Մաքրման կայան ուղղվող կեղտաջրերի քանակը կազմելու է 1266.6մ³/տարի: Մաքրման կայանից մաքրված հոսքաջրերը 300մմ տրամագծով խողովակով թափվելու են գործարանի հարևանությամբ անցնող, Քասաղ գետի ավագանին պատկանող անանոն գետակ՝ տարեկան 1280.0մ³/տարի քանակով: Մաքրված հոսքաջրերը պետք է համապատասխանեն Քասաղ գետի ավագանին պատկանող գետերի ջրերի որակի (II դաս, «լավ» որակ [27], ՀՀ Կառավարության N 75-Ն որոշման հավելված 8-ի [26]) բնապահպանական նորմերին: Հայության կատարվել է կեղտաջրերում աղտոտող նյութերի պարունակության վերլուծություն՝ մինչև մաքրման կայան և կենսամաքրումից հետո, համեմատվել է Քասաղ գետի ավագանին պատկանող գետերի ջրերի հետ: Համաձայն հաշվետվության՝ մաքրված հոսքաջրերի



հաշվարկային կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի սահմաններում, ունեն նորմատիվ մաքուր որակ, համապատասխանում են Քասախ գետի համար հաստատված ջրի որակի II դասի նորմերին, չեն խախտում գետակի ջրերի որակը և գետի հոսքի ռեժիմը: Մաքրված ջրերը ողոգման սեզոնին կարող են օգտագործվել տարածքի ողոգման համար: Մաքրման կայանում առաջանալու է նաև Յմ³ ծավալով գտված նստվածք՝ (երկու տարում): Կայանի նստվածքը հեռացվելու է 2 տարին մեկ անգամ: Նստվածքը կարող է օգտագործվել որպես պարարտանյութ կամ տեղափոխվել աէրացիայի կայան:

Գործունեության իրականացման շահագործման փուլում առաջանալու են վլուանգավորության 4-րդ դասին պատկանող թափոններ՝ խոտանված 22Եր(44.5տ) և կափարիչներ(2.3տ), պիտակներ(0.5տ), փաթեթավորման թաղանթ(5.3տ), ընդամենը 52.6տ/տարի: Խոտանված 22Երն օգտագործվելու են որպես երկրորդային հումք կամ վաճառվելու են վերամշակող կազմակերպություններին: Առաջանալու են նաև տարեկան՝ թղթի և ստվարաթղթի(1տ), կարծրացած սոսնձի(0.05տ), կենցաղային կեղտաջրերի ինքնավար մաքրման կայանի նստվածք(1.3տ), կենցաղային աղբի(3.15տ)թափոններ: Թափոնների ընդհանուր քանակը կազմելու է 58.1տ/տարի:

Թղթի և ստվարաթղթի թափոնները վաճառվելու են վերամշակման ձեռնարկություններին, իսկ կարծրացած սոսնձը տեղափոխվելու է կենցաղային աղբի հետ: Պինդ կենցաղային թափոնները կուտակվելու են աղբամանների մեջ և տեղափոխվելու են հատուկ վայր՝ տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ: Հայտում ներկայացված է նաև գործարանի փակման դեպքում, վերջինիս կոնսերվացման և խախտված տարածքի վերականգման լուծումները:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ շինարարության և շահագործման փուլերում լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, աղմուկի ավելացման, փորման, բեռնման, հողային, եռակցման աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում:

- շինարարական հրապարակի ցանկապատում,
- բաց իրապարակներում և մերձակա ճանապարհների ջրան՝ օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով,

-թափոնների կուտակում՝ հատկացված հարթակների վրա, կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով տարածքի աղտոտման բացառում,

- վտանգավոր նյութերի ճշգրիտ գույքագրում և պիտակավորում,
- գործարանի տարածքում ասպիրացիոն սարքով մթնոլորտային օդի մոնիթորինգ՝ եռամսյակը 1 անգամ,

- բաց ջրավազաններում ջրերի որակի ամենամյա մոնիթորինգ,

- պարբերաբար խախտված տարածքի բուսածածկի վերականգնում,

- կենսաբազմազանության ուսումնասիրություն՝ երկու տարին մեկ անգամ,



- շշերի խցափչման ինովացիոն մեթենայի ուլտրամանուշակագույն լամպերով և բարձր ճնշման օդի լրացուցիչ զտման համակարգի կահավորմամբ, խորքային ջրի ծախսի կրճատում՝ 10.7 հազ. մ³/տարի քանակով,

- արտաքին և ներքին հրդեհամարման համակարգի, հակահրդեհային հիդրատների տեղադրում,

-ավտոմատ սարքավորումների ներդրում՝ վթարային ոիսկերը նվազեցնելու նպատակով,

- անբարենապաստ օդերևութաբանական պայմանների դեպքում կաթսայի աշխատանքի հսկողության ուժեղացում, շինարարական աշխատանքների նվազեցում,

- բուսահողի պահում ծածկված վիճակում, բացառելով դրանց աղտոտումը,

- աշխատանքների ավարտից հետո տարածքի բարեկարգում, օգտագործելով հանված բուսահողը,

- շինարարության և շահագործման ընթացքում արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության պահպանում և այլն:

Պատճառաբանական մաս. Գործունեության իրականացման շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ: Գործարանի կառուցման արդյունքում ստեղծվելու են նոր աշխատատեղեր: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում բացառվելու կամ մեղմվելու են շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցությունները:

Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, շոշակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չքավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, ուղղված՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Գործունեության իրականացման ընթացքում հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում՝ դադարեցնել աշխատանքները, հրավիրել համապատասխան մասնագետների և աշխատանքները սկսել միայն համապատասխան կառույցի թույլտվությունից հետո:

3. Ապահովել շահագույն խմելու ջրի որակի համապատասխանությունը <<կառավարության 2014թ. հոկտեմբերի 30-ի <<Շահագույն խմելու ջրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին>> N 1240-Ն որոշման պահանջներին:

4. Ապահովել նախատեսված մաքրման կայանի տեղադրումը, վերջինիս անխափան աշխատանքը և հայտով ամրագրված մաքրված հոսքաջրերի համապատասխանությունը Քասախ գետի ավազանին պատկանող գետերի ջրերի որակին և <<Կառավարության N 75-Ն որոշմամբ սահմանված բնապահպանական նորմերին:

5. Ապահովել Հիրիկ թզուկային բազմամյա խոտարույսի վերատնկումը և հանվող ծառաթիւյին բուսականության օգտագործումը՝ գործարանի կանաչապատման նպատակով:



6. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության՝ «օրենսդրությամբ սահմանված նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

<<ԷՆ ԷՅ ՈՒՐԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ապարան համայնքի վարչական տարածքում՝ Քոչակ բնակավայրի մոտակայքում շշալցման գործարանի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



թ. Նորիջանյան